

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Էդմոն Մարուքյանի, Մարգարիտ Եսայանի և Նաիրա Կարապետյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-235-03.04.2013-ՊԻ-010/0 և Պ-235՝-03.04.2013-ՊԻ-010/0) վերաբերյալ:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 2-րդ հոդվածով նախատեսված են խարդախության այլ հանցակազմեր, որոնք տարբերվում են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված խարդախության հանցակազմից միայն դրա կատարման եղանակով: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի համաձայն խարդախությունը խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով ուրիշի գույքի զգալի չափերով հափշտակությունն է կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը, իսկ

Նախագծի 2-րդ հոդվածով լրացվող հանցակազմերով նախատեսված են եղանակներ, մասնավորապես, ոչ արժանահավատ տեղեկություններ տրամադրելը, սուտ կամ ոչ հավաստի տեղեկություններ տրամադրելը, տեղեկություններ թաքցնելը, պայմանագրային պարտականությունները կանխամտածված չկատարելը, համակարգչային տեղեկատվություն մուտք գործելը, ոչնչացնելը, ուղեփոխելը, փոփոխելը:

Նախագծով լրացվող հոդվածներով նախատեսված են նաև խարդախության հանցակազմի ենթատեսակներ, որոնք գործող օրենսգրքի համաձայն որակվելու են որպես խարդախություն: Միաժամանակ, նախագծով լրացվող հոդվածներով նախատեսված հանցակազմերի համար նույնանման հետևանքներ են նախատեսված նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունման անհրաժեշտությունը լրացուցիչ հիմնավորման կարիք ունի և առաջարկում է նախագծի հեղինակներին համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության հետ՝ փաթեթի ընդունման հիմնավորման պարագայում այն լրամշակելու հարցում՝ օրենսգրքի անհարկի կրկնությունները և ծանրաբեռնումը բացառելու նպատակով:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի պաշտոնակատար Հրայր Թովմասյանը:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրվում է օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման դեպքում

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաօլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն**.

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն**:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«ՀՀ քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ *Նախագիծը վերաբերում է բանկային համակարգում, ինչպես նաև վարկավորման, ձեռնարկատիրական գործունեության, ապահովագրության և համակարգչային ոլորտներում կատարվող հանցագործությունների և խարդախությունների համար նախատեսված տուգանքների սահմանմանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն *չի նախատեսվում*:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագծեր) ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում տնտեսական հարաբերությունների, բանկային համակարգի, ապահովագրական սեկտորի, ներդրումային գործունեության, տեղեկատվական և արդյունաբերական զարգացմանը զուգահեռ ուրիշի գույքի նկատմամբ իրավունքի ձեռքբերման նոր ձևերի առաջացման պայմանավորվածությամբ՝ նկատի ունենալով, որ նման հանցագործությունների կատարումը պահանջում է պետության կողմից հակազդեցության համապատասխան քրեաիրավական միջոցներ:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին>> և <<Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների բնապահպանության բնագավառում կարգավորման

1. <<Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին>> և <<Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծեր) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը կարող է հանգեցնել ՀՀ պետական բյուջեի եկամուտների փոփոխության, որի չափը հնարավոր չէ գնահատել՝ ելնելով եկամտատեսակի բնույթից: «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունումը և կամ չընդունումը բյուջետային բնագավառում թե մուտքերի և թե ելքերի գծով կարգավորման ազդեցության չի հանգեցնում:

Պ-235-03.04.2013-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի ապրիլի 18-ի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 178-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնելի հետևյալ բովանդակությամբ նոր 4-րդ կետով.

«4) կամ հանգեցրել է բնակարանի նկատմամբ քաղաքացու իրավունքի կորստի՝»

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնելի նոր 178.1-րդ, 178.2-րդ, 178.3-րդ, 178.4-րդ, 178.5-րդ եւ 178.6-րդ հոդվածներով՝

«Հոդված 178.1. Խարդախությունը վարկավորման ոլորտում

1. Վարկավորման ոլորտում խարդախությունը՝ վարկառուի կողմից դրամական միջոցների զգալի չափով հափշտակությունը բանկին կամ այլ վարկատուին ակնհայտ սուտ եւ (կամ) ոչ արժանահավատ տեղեկություններ տրամադրելու եղանակով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն գործողությունը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) պաշտոնական դիրքն օգտագործելով,
- 3) խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Նույն գործողությունը, որը կատարվել է՝

- 1) առանձնապես խոշոր չափերով,
- 2) կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

Հոդված 178.2. Խարդախությունը վճարումներ ստանալու ընթացքում

1. Խարդախություն վճարումներ ստանալու ընթացքում՝ օրենքով եւ այլ նորմատիվ ակտերով սահմանված նպաստներ, փոխհատուցումներ, սուբսիդիաներ եւ այլ սոցիալական վճարումներ ստանալուց դրամական միջոցների կամ այլ գույքի զգալի չափով հափշտակությունը, որը կատարվել է սուտ կամ ոչ հավաստի տեղեկություններ տրամադրելու, ինչպես նաեւ նման վճարումների դադարեցման մասին վկայող տեղեկատվությունը թաքցնելու եղանակով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն գործողությունը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) պաշտոնական դիրքն օգտագործելով
- 3) խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Նույն գործողությունը, որը կատարվել է՝

- 1) առանձնապես խոշոր չափերով,
- 2) կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

Հոդված 178.3. Խարդախությունը վճարային քարտերի օգտագործմամբ

1. Խարդախությունը վճարային քարտերի օգտագործմամբ՝ ուրիշի գույքի զգալի չափով հափշտակությունը, որը կատարվել է ուրիշին պատկանող կամ կեղծ վարկային քարտի կամ այլ վճարային քարտի օգտագործմամբ՝ վարկային, առետրային կամ այլ կազմակերպության իրավասու աշխատողի խաբեության եղանակով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն գործողությունը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) պաշտոնական դիրքն օգտագործելով
- 3) խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Նույն գործողությունը, որը կատարվել է՝

- 1) առանձնապես խոշոր չափերով,
- 2) կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

Հոդված 178.4. Խարդախությունը ձեռնարկատիրական գործունեության ոլորտում

1. Խարդախությունը, որը զուգորդված է ձեռնարկատիրական գործունեության ոլորտում պայմանագրային պարտականությունները կանխամտածված չկատարելով, որով հասցվել է զգալի վնաս՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն գործողությունը, որը կատարվել է խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Նույն գործողությունը, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

Հոդված 178.5 Խարդախությունը ապահովագրության ոլորտում

1. Խարդախությունն ապահովագրության ոլորտում՝ ապահովագրական փոխհատուցման չափով ուրիշի գույքի հափշտակությունը, որը ենթակա է վճարման ըստ օրենքի կամ պայմանագրով

ապահովվագրված կամ այլ անձին, ինչպես նաև ապահովագրական դեպքի առաջացման վերաբերյալ կեղծիքի եղանակով:

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն գործողությունը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) պաշտոնական դիրքն օգտագործելով
- 3) խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Նույն գործողությունը, որը կատարվել է՝

- 1) առանձնապես խոշոր չափերով,
- 2) կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

Հոդված 178.6 Խարդախությունը համակարգչային ոլորտում

1. Խարդախությունը համակարգչային ոլորտում՝ ուրիշի գույքի զգալի չափով հափշտակությունը կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունք ձեռք բերելը՝ համակարգչային տեղեկատվություն մուտք գործելու, ոչնչացնելու, ուղեփակելու (մեկուսացնելու), փոփոխելու կամ համակարգչային տեղեկատվության պահպանման, մշակման կամ փոխանցման գործունեությանը այլ միջամտության եղանակով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն գործողությունը, որը կատարվել է՝

- 1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,
- 2) պաշտոնական դիրքն օգտագործելով
- 3) խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Նույն գործողությունը, որը կատարվել է՝

- 1) առանձնապես խոշոր չափերով,
- 2) կազմակերպված խմբի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:»

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Պ-235՝-03.04.2013-ՊԻ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 1-ին մասի «178-րդ հոդվածի 1-ին մասով» բառերը փոխարինել «178-178.6-րդ հոդվածների 1-ին մասերով» բառերով

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» եւ
«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն
կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի
վերաբերյալ**

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը.

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետությունում տնտեսական հարաբերությունների, բանկային համակարգի, ապահովագրական սեկտորի, ներդրումային գործունեության, տեղեկատվական եւ արդյունաբերական տեխնոլոգյաների զարգացմանը զուգահեռ ուրիշի գույքի հափշտակման կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունքի ձեռքբերման նոր ձեւերի առաջացման պայմանավորվածությամբ՝ նկատի ունենալով, որ նման հանցագործությունների կատարումը պահանջում է պետության կողմից հակազդեցության համապատասխան քրեաիրավական միջոցներ: Այդ են վկայում, վերջին տարիներին ՀՀ քրեական օրենսգրքի միայն սեփականության, տնտեսության եւ տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների բաժնում բազմաթիվ նոր հանցակազմերի ավելացումը: «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը բխում է «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծից՝ նկատի ունենալով, որ նախատեսված հանցագործությունների վերաբերյալ, մասնավորապես, նշված հոդվածների 1-ին մասերով, գործերը կարող են հարուցվել միայն տուժողի բողոքի հիման վրա:

2. Ընթացիկ իրավիճակը.

Որպես սեփականության դեմ ուղղված հանցագործություն, խարդախությունը հանդիսանում է ամենատարածված ոտնձգություններից մեկը՝ ամենատարբեր ոլորտներում: Սակայն ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված խարդախության հանցակազմը ամբողջովին չի ներառում այս կամ այն տնտեսական հարաբերությունների առանձնահատկությունները, ինչպես նաեւ թույլ չի տալիս պատշաճ մակարդակով ապահովել խարդախությունից տուժած քաղաքացիների գույքային իրավունքների պաշտպանությունը:

3. Առաջարկվող լուծումները:

Նախագծով առաջարկվող լրացումները էականորեն կձեռնափոխեն խարդախության մասին հանցակազմերը, որոնք ուղղված են խարդախության տարբեր ձևերի տարբերակմանը: Նախ, դա պայմանավորված է այն հանգամանքով, որ նշված հանցագործությունները կատարվում են հասարակական հարաբերությունների ամենատարբեր ոլորտներում, առնչվում են ինչպես առանձին քաղաքացիների, այնպես էլ քաղաքացիների մեծ խմբերի հետաքրքրություններին, իսկ հասարակական հարաբերություններին պատճառում են էական վնաս:

Նախագծով ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասը լրացվել է նոր կետով՝ խարդախության հետեւանքով բնակարանի նկատմամբ քաղաքացու իրավունքի կորստին: Նման հատկանիշի ներդրումը մեր կարծիքով արդարեցված է՝ ելնելով խարդախության հասարակական եւ սոցիալական վտանգավորությունից:

Առաջինը՝ նման գործողություններով խախտվում է մարդու սեփականության եւ բնակարան ունենալու սահմանադրական իրավունքը:

Երկրորդը՝ բնակելի տարածքի արժեքից կախված եւ ելնելով հասցված վնասի չափից՝ գործողությունները կարող են որակավորվել ինչպես 178-րդ հոդվածի 2-րդ՝ խոշոր չափերով, այնպես էլ 3-րդ մասերով՝ առանձնապես խոշոր չափերով: Նշվածի հետեւանքով առաջանում է նորմերի մրցակցության հիմնախնդիր: Հետեւաբար ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասը նոր 4-րդ կետով լրացնելու անհրաժեշտությունը բխում է նաեւ իրավական որոշակիության սկզբունքից:

ՀՀ քրեական օրենսգրքը լրացվել է նաեւ 178.1-178.6-րդ հոդվածներով, որոնք պատասխանաբար են նախատեսում խարդախության նոր ձևերի համար:

ՀՀ քրեական օրենսգրքի 178.1-րդ հոդվածում ամրագրված է վարկավորման ոլորտում խարդախության համար պատասխանատվություն սահմանող հատուկ նորմ, այսինքն վարկառուի կողմից դրամանական միջոցների հափշտակումը, բանկին կամ այլ վարկատուին ակնհայտ սուտ կամ ոչ հավաստի տեղեկությունների տրամադրման միջոցով: Խարդախության այս ձևը բավականին տարածված է եւ կարող է առաջացնել ծանր հետեւանքներ, նույնիսկ հասցնել ընդհուպ ճգնաժամային իրավիճակների բանկային ոլորտում: Այդ պատճառով էլ այս գործողության քրեականացումը առանձին հանցակազմով հիմնավորված է:

ՀՀ քրեական օրենսգրքի 178.2-րդ հոդվածը նախատեսում է պատասխանատվություն օրենքով եւ այլ նորմատիվ ակտերով սահմանված նպաստներ, փոխհատուցումներ, սուբսիդիաներ եւ այլ սոցիալական վճարումներ ստանալուց դրամական միջոցների կամ այլ գույքի հափշտակման համար, որը կատարվել է սուտ կամ ոչ հավաստի տեղեկություններ տրամադրելու, ինչպես նաեւ նման վճարումների դադարեցման մասին վկայող տեղեկատվությունը թաքցնելու միջոցով: Այս նորամուծությունը թույլ է տալիս անհատականեցնել նման խարդախության համար պատասխանատվությունը:

Վարկային քարտերի շուկայի զարգացման հետ շատ մարդկանց համար կրեդիտային քարտերը դարձել են գումարները պահելու սովորական միջոց: Այսպիսով, ուրիշի գույքի հափշտակումը, որը կատարվել է ուրիշին պատկանող կամ կեղծ վարկային քարտի կամ այլ վճարային քարտի օգտագործմամբ՝ վարկային, առետրային կամ այլ կազմակերպության իրավասու աշխատողի խաբեության միջոցով, սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի 178.3-րդ հոդվածում:

Ձեռնարկատիրական գործունեության ոլորտում խարդախությունը սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի 178.4-րդ հոդվածում: Այն արտահայտվում է ձեռնարկատիրական գործունեությունում պայմանագրային պարտականությունները կանխամտածված չկատարելով: Խարդախության այս ձևը էականորեն տարբերվում է մյուս նորամուծություններից, քանի որ այն չունի մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարվելու ծանրացուցիչ հանգամանք, ինչպես նաեւ կազմակերպված խմբի կողմից կատարվելու ծանրացուցիչ հանգամանք:

Ապահովագրության ոլորտում կարելի է նշել հատկապես խոցելի ոլորտներ, որտեղ խարդախությունը հասնում է հսկայական չափերի: Դրանք են բժշկական, տրանսպորտային միջոցների, սոցիալական փաթեթի շրջանակներում իրականացվող եւ այլ տեսակի ապահովագրությունը: Խարդախության այս ձևի նախատեսումը ՀՀ քրեական օրենսգրքի 178.5-

րդ հողվածում կբարձրացնի ապահովագրության շուկայում խարդախության դեմ պայքարելու որակը:

ՀՀ քրեական օրենսգրքի 178.6-րդ հոդվածը սահմանում է պատասխանատվություն՝ խարդախության համար, որը կատարվում է համակարգչային ոլորտում տարբեր միջամտությունների հետեւանքով: Այդպիսի գործողությունները կատարվում են ոչ թե կոնկրետ անձի նկատմամբ խաբեության կամ վստահությունը չարաշահելու միջոցով, այլ համակարգչային համակարգին հասանելիություն ստանալու միջոցով, որն էլ արդյունքում բերում է ուրիշի գույքի կամ ուրիշի գույքի նկատմամբ իրավունքի ձեռք բերման:

4. Կարգավորման նպատակը եւ ակնկալվող արդյունքը:

Խարդախության բաժանումը մի քանի նեղ խմբերի արդարացված է նաեւ նշված հողվածների հատկանիշներով դատավճիռների թափանցիկության եւ օբյեկտիվության տեսանկյունից՝ նկատի ունենալով, որ դատավճիռ կայացնելիս հաշվի կառնվի նաեւ կոնկրետ տնտեսական հարաբերությունների յուրահատկությունը:

Ելնելով դրանից, կարելի է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքում առաջարկվող լրացումները դրական քայլ են հասարակական հետաքրքրությունների պատշաճ քրեաիրավական պաշտպանության, հանցագործությունների ճիշտ որակման, սխալների եւ խարդախության հանցակազմով քրեական գործերի հարուցման ժամանակ չարաշահումների նվազեցման ոլորտներում? հաշվի առնելով խարդախության վերաբերյալ իրավակիրառ փորձը, մասնավորապես ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումները:

Ներկայացված լրացումները կխթանեն նման հանցագործությունների բացահայտման աշխատանքներին, կօգնեն ավելի հստակ տարանջատել քրեորեն պատժելի արարքները քաղաքացիաիրավական գործարքներից, որոնք հիմնավորվում են նաեւ միջազգային փորձի ուսումնասիրությամբ: Մասնավորապես, Գերմանիայի քրեական օրենսգրքի «Խարդախությունը եւ վստահության հանցավոր չարաշահումը» վերտառությամբ 22-րդ բաժինն իր մեջ ներառում է 10 հանցակազմ: Այսպես, Խարդախության հիմնական հանցակազմի հետ մեկտեղ սահմանվում են նաեւ նրա բազմաթիվ տեսակները, օրինակ՝ համակարգչային խարդախություն (263ա), խարդախության միջոցով սուբսիդիաների ստացում (264), ներդրումների ժամանակ խարդախություն (264ա): Նման մոտեցում է որդեգրել նաեւ Ռուսաստանի Դաշնությունը փոփոխություններ եւ լրացումներ կատարելով քրեական օրենսգրքի «Սեփականության դեմ ուղղված հանցագործությունները» վերտառությամբ 21-րդ գլխում, ինչպես նաեւ Իսպանիան (248), Իսրայելը (439-446) եւ այլն: Նախագծի մշակման աշխատանքները համակարգել է Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանի ասպիրանտ Սամվել Յուզբաշյանը: